

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Թ. ՄԱՆԴԱԼՅԱՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՈՐԸ  
(ՈԳՈՍՏՈՍԻ Ե-Ը)

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԳՉՈՒԹՅՈՒՆ

Յերևան—1929 թ.



Թ. ՄԱՆԿԱԼՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՈՐԸ  
(ՈԳՈՍՏՈՍԻ 1-Ը)

A  $\frac{I}{8660}$



ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յերևան—1929 թ.



Թ. ՄԱՆԳԱԼՏԱՆ


ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՈՐԸ  
(ՈԳՈՍՏՈՍԻ 1-Ը)

A  $\frac{7}{8660}$



ԳԵՅԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Յերևան—1929 թ.




ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ  
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատվեր № 768 Հր. № 1026

Տիրած 5000

Գրառեպլար № 2281 ք.



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ՈՐԸ

(Ոգոստոսի 1-ը)

Ոգոստոսի 1-ին լրանում է 15 տարին այն օրից, յերբ սկսվեց համաշխարհային պատերազմը: Թեև բոլոր կռվող պետութիւնները ներկայացուցիչներն այն ժամանակ հայտարարում էին, վոր այդ պատերազմը վերջին պատերազմն է լինելու, այսօր նոր համաշխարհային կռիւները սպառնալիքը նորից կախվել է յերկրագնդի գլխին: Նոր պատերազմ է պատրաստվում բուրժուական յերկրների կողմից. նա մի քանի անգամ ավելի ահաւոր կլինի, քան վերջին, 1914—1918 թվի սպանդանոցը: Կապիտալիստական պետութիւններն սնընդհատ սպառազինվում են, տենդոս պատրաստութիւն են տեսնում գալիք պայքարի համար: Միաժամանակ բուրժուազիան ավելի ամուր է սեղմում բանվորութեան կողորդը, լավ գիտենալով, վոր միայն բանվոր դասակարգն ընդունակ է խորտակելու նրա բոլոր ծրագրերը, ազատագրելու մարդկութիւնը կապիտալիզմից և նրա արհամիրքներից:

Նոր պատերազմների նախապատրաստման դրծում բուրժուազիան ոգտագործում է իր ազդեցութեան ամբողջ ապարատը՝ յիկեղեցին, դպրոցը, մամուլը, սոցիալ-դեմոկրատիան: Նա նույնիսկ բանվորութեան մի խոշոր մասն այդպիսով պահում է իր ազդեցութեան տակ:

Ահա թե ինչու միջազգային բանվորութեան դի-



տակից և հեղափոխական հատվածները, կոմմունիստական կուսակցութեան ղեկավարութեան տակ, հայտարարել են ոգոստոսի 1-ը հակաիմպերիալիստական, հակապատերազմական, հակաֆաշիստական որ, լերբ բանվորական մասսաները բոլոր յերկրներում, հավաքվելով հեղափոխական լողուններին շուրջը, պիտի ցուց տան իրենց պատրաստակամութունը՝ պայքարելու ֆաշիզմի ու պատերազմի վտանգի դեմ: Միլիոնավոր բանվորներին հսկա ցույցերն այդ որը պիտի ամբողջ աշխարհին հիշեցնեն մտեցող պատերազմների վտանգի մասին և պիտի կրկնապատկեն այդ վտանգի դեմ ակտիվ կռիւ պատրաստվող հեղափոխական բանվորների շարքերը:

ԵճԷպես եմ սովում Կապիտալիզմը պատերազմից կապիտալիզմի եւ հետո ապրել և միջանի շրջան: Կասուքուճճերը 1918—21 թվականներին նա ծանր դրութեան մեջ եր. բանվորական շարժումները հիմքից ցնցում ելին կապիտալիստական կարգերը. հեղափոխական շրջան եր այդ, յերբ բուրժուազիալի թագավորութունը մազից եր կախված: Բայց հեղափոխական շարժումներն անհաջողութեան հանդիպեցին: Կապիտալիզմը փրկվեց յերկու հանգումանքի շնորհիվ՝ 1) կոմմունիստական կուսակցութուններ կամ չկային կամ անփորձ ելին, 2) սոցիալ-դեմոկրատիան, վորի ազդեցութունը բանվորութեան վրա մեծ եր, ակտիվ կերպով ոգնեց բուրժուազիային:

Հետո սկսվում ե այսպես կոչված կապիտալիզմի ժամանակավոր սկսուլնացման շրջանը, յերբ արդեն բուրժուազիան ե անցնում հարձակման քանվորութեան վրա, ավելացնում ե աշխատանքի ժամերի թի-

վը, կրճատում աշխատավարձը, աշխատանքից հեռացնում հեղափոխական բանվորներին, հալածում կոմունիստներին:

Այժմ արդեն մի յերկու տարի յե, վոր սկսվել է կապիտալիզմի հետպատերազմյան դարդացման նոր, յերրորդ շրջանը: Ինչ՞ով է տարբերվում այդ շրջանը յերկրորդ շրջանից:

Տարբերութունը նրանում է, վոր կապիտալիզմի առաջ կանգնած դժվարութունները շատ մեծ չափեր են ընդունում, նրա հակասութունները սրվում են, և «կայունացումը» դառնում է շատ խախուռ, բարձրացում էն հեղափոխական օտոման ալիքները:

Բուրժուական յերկրներում արտադրութունը հասել է արդեն մինչպատերազմյան մակարդակին և շատ տեղերում անցել է այդ մակարդակից: Այժմ ավելի մեծ քանակությամբ ապրանք է արտադրվում, քան սպտերազմից առաջ: Բուրժուազիայի համար սա կատարյալ տնաքանություն է, վորովհետև ապրանքը շատ է, բայց այդ ապրանքը ծախելու, «սաղացնելու» հնարավորությունը քիչ, շուկաները վոչ միայն չեն մեծացել, այլև փոքրացել են: Որինակ, Գերմանիան հիմա ավելի յե արտադրում, քան առաջ, բայց նրա շուկաներն այլևս առաջվա չափը չունեն, նրա գաղութները, վորտեղ նա ծախում էր իր պատրաստի ապրանքները, իլվեցին նրա ձեռքից պատերազմից հետո: Նույնիսկ Անգլիան փաստորեն կորցրել է իր շուկաների խոշոր մասը, վորովհետև վերջին 10 - 15 տարվա ընթացքում Ամերիկան ու Յապոնիան հեռզհետե պինդ վտաք են դնում Հնդկաստանում, Չինաստանում

և մյուս անդլիական դադութներում: Վերջապես, հին ցարական Ռուսաստանը, վորը մեծ շուկա չեր կապիտալիզմի համար, այլևս գոյություն չունի\*):

Բացի այդ, հենց նույն դադութային հետաքննաց յերկրներում, ինչպես Ձինաստանն է, Հնդկաստանը, Յեզիպոսը և այլն, այսոր գոյություն ունի սեփական արդյունարերութուն, վորը յըցում է դրսից բերվող ադրանքների գեմ: Սա ևս նպաստում է շուկաների փոքրանալուն:

Չպետք է մոռանալ, վոր չեթե կապիտալիստները ծախում են իրենց ապրանքներն արտասահմանում, դրա պատճառն այն չի, վոր իրենց յերկրում կարիք չկա այդ ապրանքների: Կարիքը մեծ է, կապիտալիստական յերկրներում բանվորները և աշխատավոր գյուղացիությունը մեծ մասամբ և ուտելիքի, և հագուստեղենի սով են զգում, բայց նրանք հնարավորութուն չունեն գնելու այդ ապրանքները, վորովհետև նրանց աշխատավորքը ցածր է, իսկ կապիտալիստը միշտ ուզում է վորքան կարելի չե ցած ոգուտ անել:

Այս դրութունը տիրել և միշտ կապիտալիստական աշխարհում. մի կողմից հավաքվում է ապրանքների ավելցուկ, ստացվում է այսպես կոչված գերարտադրություն, մյուս կողմից, բանվորությունը սուր կարիք է զգում այդ ապրանքների և չի կարողանում

\*) Որո՞րդային Միութունն էլ ապրանքներ է ներմուծում արտասահմանից: Բայց տարբերութունն այն է, վոր ցարական Ռուսաստանի կապիտալիստները ներմուծում էին այն, ինչ վոր իրենք էին ցամկանում, իսկ մենք ներմուծում ենք այն, ինչ վոր մենք ենք ցամկանում: մեծ մասամբ մեքենաներ ու արտադրության միջոցներ, այն էլ սահմանափակ չափերով:

գնել: Բայց այսոր այդ հակասութիւնը հսկա չափերի չի հասել:

Պապիտալիստը չգիտի, թե ինչ անել իր ապրանքներին հետ: Բայց նա չգիտի, թե ինչ անել նաև իր ուսուցիչներին հետ: Այն հսկայական գումարները, վոր նա ստանում է իրրև ոգուա, մնում են առանց գործադրութեան: Յեւ իսկապես, ինչ կարող է նա անել, նոր գործարաններ հիմնել—բայց սա կնշանակի ավելի ուժեղացնել գերարտադրութեանը: Յեւ նա աշխարհից աշխարհ ընկած մի տեղ է փնտռում՝ շահավետ կերպով իր կապիտալն ոգտագործելու համար:

Այս բոլորի հետեանքն այն է, վոր կապիտալիստական դանազան խմբակներն միջև, ուրեմն և ամբողջ կապիտալիստական պետութեաններն միջև մըրցումն ավելի ու ավելի կատաղի ձևեր է ընդունում: Իրեն հակառակորդներն դեմ հաջող կերպով մրցելու համար ամեն մի կապիտալիստական խմբակ աշխատում է ավելի եժան ապրանք արտադրել: Իսկ այդ նպատակին հասնելու համար նա ավելի ու ավելի վատացնում է բանվորներն դրութեանը՝ ավելացնում նրանց աշխատանքի ժամերը, ստիպում ավելի լարված աշխատել, մտցնում է կապիտալիստական ոսցիոնալիզացիան, աշխնքն դարձնում է բանվորին կատարյալ մեքենա, վորի ամեն մի շարժումը չափած-ձևած է: Ծիշա է, բանվորները շատ արագ հյուսիսում են, միջանիտարուց հետո դառնում անդամալուծ, բայց դա կապիտալիստի հոգսը չէ:

Թե կապիտալիստական ոսցիոնալիզացիան, թե տեխնիկայի նոր բարձր մեթոդներն ու ձևերը կրճատում են բանվորներին թիվը, հսկայական չափեր է

ընդունում գործադրելու քուսակը: Ուրեմն մի կողմից ել ավելի աճում և արտադրած ապրանքների քանակը, մյուս կողմից բանվորութեան յեկամուտը վոչ միայն չի ավելանում, այլև պակասում է:

Կապիտալիզմի համար այս դրութիւններից յեւթ չկա: Իսկ կապիտալիստական առանձին խմբակները իրենց միակ յեւթը փնտռում են մյուս չերկրների կապիտալիստների շուկաները խլելու մեջ՝ մի կողմից, և մյուս կողմից ել բանվորներին, Պորրուգային Միութիւնը և դադութային ժողովուրդներին խեղդելու մեջ:

Բայց այդ այնքան ել հեշտ չէ. աճում և ուժեղանում է Պորրուգային Միութիւնը, աճում և բանվորական շարժումը և դադութային չերկրների բանվորագոյուղացիական շարժումները (հիշենք Չինաստանի և Հնդկաստանի դեպքերը): Իսկ կապիտալիստական չերկրներից վոչ մեկը չի ուզում իր դիրքերը զիջել մյուսին:

Քուսակապիտալի պատճառով չի շարժանում այս սերագմակաճ պատճառով: Բայց հակասութիւնները չափաբաստուքուցաները դանց սուր ընուլթ են ստանուս և կապիտալիզմի դրութիւնը դարձնում խախուտ: Մի կողմից սկսում է բարձրանալ հեղափոխական ակիբը, մյուս կողմից մտանում է պատերազմի վտանգը:

Բուրժուազիան շատ լավ գիտի, վոք իր միակ յեւթը պատերազմն է, թեև պատերազմի հետեանքները շատ ծանր կարող են լինել հենց իրեն համար: Նա լարված պատրաստութիւնն է տեսնում այդ պատերազմի համար:

Պատրաստվում են իրար դեմ Անգլիան ու Ամե-

րիկոն, վորովհետև այդ չերկու կապիտալիստական յերկրների շահերը համարյա ամեն տեղ բաղխվում են: Յերկու յերկրների դինվորական շրջաններում ազատ խոսուած են անգլո-ամերիկական պատերազմի մասին: Վերջերս եր, վոր ամերիկական ծովային ուժերի հրամանատարներից մեկը՝ տղմիրալ (ծովակալ) Պլանկետը հայտարարեց, թե «պատերազմը Անգլիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների մեջ անխուսափելի չէ»: Ամերիկան տենդոտ կերպով զրահանավեր և կռուցում, ծախսելով միլիարդներ այդ նպատակի համար: Իսկ Անգլիան կռուցում և Մինդապուրում, Հնդկաստանից դեպի Ամերիկա տանող ճանապարհին մի հսկայական ծովային բազա, վորի վրա նույնպես հարյուրավոր միլիոններ են ծախսվում, և վորն ուղղված և բացահայտ կերպով Ամերիկայի դեմ:

Բացի այդ, Յապոնիան պատրաստվում և պատերազմի Ամերիկայի դեմ, Ֆրանսիան՝ Իտալիայի, Գերմանիան՝ Ֆրանսիայի, Իտալիան՝ Հարավ-Մլավիայի և այլն և այլն:

Միաժամանակ, անգլիական կապիտալիզմի թելադրանքով, մեր յերկրին սահմանամերձ կապիտալիստական յերկրներում՝ Լեհաստանում; Ռումինիայում և այլն, պատրաստու թյուն և դնում պատերազմի Խ. Միության դեմ: Այդ գործին ոժանդակում են բոլոր յերկրների ֆաշիստները, նաև մեր յերկրից փախած ուս սպիտակզվարդիականները, զառեակները, մեքեովիկները յեվ մուսավաքիստները: Յեվ մենք միշտ պիտք և հիշենք, վոր վորքան ել մեծ լինեն կապիտալիստական յերկրներին միջև գոյություն ունեցող տարածայնությունները, նրանք կարող են ժամանակավորապես համա-

ձայնութեան գույ Թորհրդային Միութեան դեմ միացալ ճակատ ստեղծելու համար:

Կապիտալիզմն ավելի մեծ լեռանդով և պատրաստվում պատերազմի, քան մինչև 1914 թիվը:

Այդ ցույց են տալիս թվական տվյալները: Կանոնավոր բանակների թիվը (բացի ծովային ուժերից) հետևյալն է չեղել հիմնական կապիտալիստական յերկրներում.

	1913 թ.	1923 թ.	1928 թ.	Պահեստի ուժերի հեռ միասին
Ամերիկայի Միաց. Նահանգ.	226,000	373,000	413,000	3,500,000
Ֆրանսիա	546,000	732,000	695,000	5,500,000
Անգլիա	516,000	329,000	381,000	4,500,000
Իտալիա	264,000	245,000	369,000	4,000,000
Յապոնիա	271,000	236,000	209,000	3,209,000
Ընդամեն 5 պետութունները	1,827,000	1,917,000	2,065,000	20,700,000

Սա պաշտոնական թվեր են. բայց չէ՞ վոր բացի «կանոնավոր» բանակից, զոչութուն ունեն անթիվ ծածկված բանակներ, ֆաշիստական կազմակերպություններ, վորոնք ուղղմական կառուցվածք ունեն և ընդգրկում են միլիոնավոր անդամներ (հենց միայն Լեհաստանում այդպիսիների թիվը մի միլիոնից ավելի է):

Տարեցտարի աճում են բոլոր կապիտալիստական պետութունների ուղղմական բյուջեները. Լեհաստանի ուղղմական բյուջեն 1927 թվին 844 միլիոն զլտաի չեր (զլտաին հավասար է մոտ 30 կոպ.), իսկ 1928 թվին՝ 1 միլիարդ 25 միլիոն. նա կազմում է

ամբողջ պետական բյուջեյի 24 տոկոսը, այսինքն համարյա թե կեսը:

Բուրժուազիան մեծ ուշադրութիւն է դարձնում սազմական գործում նոր, բարձր տեխնիկական պատրաստելուն: Առանձնապէս խոշոր նշանակութիւն է տրվում որպէս շրջաններ: Արդեն այժմ գոյութիւն ունեն այնպիսի անրոպլաններ, վարոնք թուշում են առանց որպէս ի և կառավարվում են թոխչքի ժամանակ դրսից՝ սաղիոյի միջոցով:

Ձինվորական անրոպլանների արտադրութիւնը կազմում էր՝

	1922 թ.	1923 թ.	1930 թ. կլինի
Տրանսիայում	1.350	1.650	2.000
Անգլիայում	400	850	1.000
Ամերիկայի Միաց. Նահ. 420		950	1.200

Կապիտալիստական պետութիւններն աշխատում են շատ անրոպլաններ չարտադրել, վորովհետև որ ուրի վրա անրոպլանները կատարելագործվում են, նոր սխտեմներ ստեղծվում, այնպէս վոր մի յերկու տամ բուց հին մեքինաններն արդեն չեն համապատասխանութեխնիկայի վերջին պահանջներին: Բայց նրանք հարմարեցնում են իրենց գործարաններն այնպէս, վորպէսզի պատերազմի դեպքում մի յերկու ամովա մեջ հազարավոր նոր տիպի անրոպլաններ արտադրեն:

Մարդասպանութիւն Պարզ է, ուրեմն, վոր նորպա-  
միջոցների արտա- տերազմները նոր ավելի բարձր  
գրութիւնը տեխնիկական միջոցներով կար-  
վին: Որպէս շրջաններն ստեղծում է այնպիսի պայ-  
մաններ, վոր ալլևա ճակատը թիկունքի հետ կարծես  
միանում է, ամբողջ յերկիրը դառնում է պատերազմի



դաշտ Դործադրվող ռազմամթերքի քանակը, յուրաքանչյուր դործամասին հատկացված թնդանոթների, դնդաղիւրների, զրահապատ ավառմբիլների, տանկերի թիվը մի քանի տասնյակ անգամ ավելի շատ կլինի, քան անցյալ պատերազմի ժամանակ: Վերջապես, հսկա չափով կուժեղանա պատերազմի ամենաանավոր զենքը՝ քիմիական թունավոր զաղերի գործադրութիւնը: Բոլոր կապիտալիստական չերկրներում այսօր քիմիական արդյունաբերութիւնը մեծ քալլերով առաջ ե գնում, և կապիտալիստներն ամեն կերպ սժանդակում են այդ արդյունաբերութիւնը, իրրև ռազմական նշանակութիւն ունեցող ճյուղի:

Դժվար չի հասկանալ, վոր այդպիսով վերջապես կապիտալիզմը գտել և մի նոր արդյունաբերութիւն, վորն ունի անսպառ ու անսահման շուկա. այդ անսպառ ռուկան պատերազմն է և արդյունաբերութիւնը՝ մարդասպանական միջոցների արտադրութիւնն և Յերկաթ ու պողպատ արտադրող կապիտալիստները նոր մեքենաներ չեն արտադրի, վորովհետև այդ մեքենաների կորիք չի դում ալլիս բուրժուազիան. նա չափից շատ մեքենաներ ունի արդեն և ստիպված է պարապ պահել չեղածներից շատերը, փակել գործարանների մի մասը շուկա չլինելու պատճառով: Նրանք մեքենաներ չեն արտադրի, ալլ կարտադրին թնդանոթներ, զրահապատներ ու ռազմամթերք: Այս բոլորը նրանք ծախում են իրենց պետութիւնը, իսկ պետութիւնն ալլելացնում է տարեցտարի իր ռազմական բյուջեն, մոր ռուբրե գնելով բանվորների ու գյուղացիների ուսերից, Նույնը անում են և քիմիական կապիտալիստները և ալլն:

Ուրեմն բանվորներից ու սլավոնացիներից տուրքերի ձևով հավաքվող փողերը մանուսկրի սպասարանում կազմակերպելու և ապա մանուսկրի կազմակերպիչները մատակարարող կապիտալիստների գրոյանը:

Այսպիսով բուրժուազիան միանգամից յերկու նապաստակ երևնում և ուժեղացնում է իր ռազմական ուժերը և իր ապրանքները չաղ գնորով «սաղացնում»:

Հիմա կարող եք չերևակայել, թե ի՞նչպիսի ոգուտներ կստանա պատերազմի ժամանակ բուրժուազիան: Ի՞նչպիսի քանակութամբ յերկաթ, արծիճ, դաղեր, շինանյութեր, հագուստեղեն կպահանջվի: Գործարանները կաշխատեն լրիվ կերպով, որ ու գիշեր, մարդասպանութան հազար տեսակի միջոցներ արտադրելու համար: Իսկ ոգուտները կդիզվեն սարերի նման:

Սեռ քե ինչու կապիտալիստի համար ամենազբնադ, ամենագեղեցիկ յերազը՝ պատերազմն է: Թընդանութների վորոտը, միլիոնավոր մեռնողների հառաչանքները, վորքերի վայնասունը՝ ամենասանուշ յերաժըշտութունն է նրա համար, իսկ հրդեհվող քաղաքների ու ամայացող յերկրների տեսքը՝ ամենազեղարվեստական տեսարանը:

Միակ բանը, վոր յետ ե պահում նրան առաջժմս պատերազմից, դա հեղափոխութայան վախն է, բուրժուազիան վախենում է, վոր պատերազմի սարսափներից ազդվելով բանվորները, վորոնց ձեռքը ինքը գենք է տվել, կդարձնեն իրենց սվինները կապիտալիստների դեմ, կջախջախեն բուրժուազիային այնպես, ինչպես արին ոռոսական բանվորները 1917 թվին: Յեվ նա աշխատում է վորքան կարելի լի թուլացնել այդ վտանգը զանազան միջոցներով:

Այդ միջոցներից ամենահիմնականը սաղմահան ուժերի վերակազմակերպումն է: Բոլոր կապիտալիստական լերկրներում այսոր նկատվում է մի ցանկություն՝ դարձնել բանակը դասակարգային իր սոցիալական կազմով, թեկուզ և վորոշ կրճատման գնով: Մի շարք լերկրներում բանակը կազմված է կամավորներից: Յուրաքանչյուր կամավորի լավ զտում են և լեթե նա կազմված է ըանվորական կազմակերպությունների հետ, հրաժարվում են ընդունելուց: Բոլոր լերկրներում վոչ միայն հրամանատարական կազմը (բարձր, միջին թե ստորին), այլև տեխնիկական զորամասերը՝ ողջոտական, քիմիական, տանկային և այլն, կազմված են համարյա ամբողջովին Ֆաշիստներից կամ բուրժուազիային հավատարիմ ապրերից:

Միաժամանակ բուրժուազիան պատրաստում է իր լայն ուղերմուկները, պահեստի ուժերը պատերազմի համար, Ֆաշիստական դանազան կազմակերպություններ իրենց շուրջն են հավաքում բուրժուական և մանր-բուրժուական չրիտասարգությունը, զինվորական մարզանքներ տնում, զենքի վարժեցնում: Այդպիսի կազմակերպությունները փաստորեն բուրժուական բանակի մի մասն են կազմում և ամենահավատարիմ մասը, բայց պաշտոնապես իբր թե բանակի հետ կապ չունեն: Այդպիսիների թվին են պատկանում «Պողպատե սաղավորտի» Ֆաշիստական խմբերը Գերմանիայում, «Երաձիգները» Լեհաստանում և այլն:

Բուրժուազիան հասկանում է, վոր ինչքան էլ աշխատի, չի կարողանա պատերազմի դեպքում բանվորների ձեռքը զենք չտալ, վորովհետև պատերազմը մասսայական բանակ է պահանջում, նա անխուսափե-

լիորեն միլիոնավոր մարդկանց զինքի տակ կոչնիլ  
Բայց նա աշխատում է այդպիսի միջոցներով ապահո-  
վել բանակի ամենակատեվոր ցիրքերը իրեն հավատա-  
րիմ տարրերի համար:

Տաշխատական կազմակերպությունները վուչ միայն  
պատերազմի դեպքում են անհրաժեշտ բուրժուազիա-  
յին: Նրանք հարկավոր են և խաղաղ ժամանակ՝ բան-  
վորական շարժումները ճնշելու համար: Այդ գործում  
նրանք ունության են դալիս վոստիկանությանն ու  
ժանդարմներին:

Պատերազմին պատրաստվող բուրժուազիան իր  
բոլոր ուժերը գործադրում է հեղափոխական բանվո-  
րական կազմակերպություններին հալածելու և նրանց  
աշխատանքի հնարավորությունները սահմանափակե-  
լու համար:

Բուրժուազիայի պատերազմական նախապատ-  
րաստությունները սիրտ կերպով կապված են նրա  
ամբողջ ներքին քաղաքականության և յերկրի ներ-  
սում ծավալվող դասակարգային պայքարի հետ: Մեկը  
պայմանավորված է մյուսով. ներքին քաղաքականու-  
թյունը տարվում է այնպիսի ձևերով, վորոնք նպաս-  
տելու յեն պատերազմի հաջող պատրաստությանը,  
յսկ պատերազմի պատրաստությունը բղխում է ներքին  
քաղաքականության պահանջներից: Մոտեցող պա-  
տերազմը պահանջում է ավելի ուժեղ կերպով շահա-  
գործել բանվորներին, խեղդիլ նրանց մեջ բողոքի ա-  
մեն մի նշույլ: Կապիտալիստների կատաղի մրցումը  
համաշխարհային շուկաներում նույնն է պահանջում:

Ուժեղանում և կապիտալիստների տնտեսի ճնշումը,  
ուժեղանում է դասակարգային պայքարը և բանվոր

դոստակարգի ընդդիմադրութիւննը, աճում են կապի-  
տալիստական աշխարհի հակասութիւնները, և մոտե-  
նում է այն օրը, յերբ նրանք զենքով ու արյունով  
պիտի լուծվեն:


Ի՞նչպէս են կապիտա- Բուրժուազիան հիմար կլի-  
ւիտացիոնը կասլում առ- ներ, ինքի աշխարհ կերպով  
խառնաձուլութեան աչքերը հայտարարեր, թե ինքը պատե-  
րազմի չե ձգտում և պատրաստվում: Նա պիտի, վոր  
վերջին պատերազմի սարսափները զեւ չեն մոռացվել:  
Նա ամեն տեղ աշխատում է հավատացնել, վոր ինքը  
խաղաղութիւն կողմնակից է: Ամեն մի բուրժուական  
պետութիւն սպառազինվում է, պատճառաբանելով, թե  
ուրիշներն էլ են սպառազինվում: Ամեն մի յերկրում  
կապիտալիստները ձեացնում են, իբր թե իրենք պա-  
տերազմի թշնամիներ են, միաժամանակ կատարի ռազ-  
մական պատրաստութիւն են տեսնում և կատարի  
դադարաւորական աշխատանք են տանում՝ թունավո-  
րելով շովինիզմի (ազգամոլութիւն) թուլնով բանվոր-  
ներին ու մանավանդ յերիտասարդ սերունդը, դպրոցի,  
գրականութիւն, մամուլի, սպորտի, լեկեղեցու և այլ  
միջոցներով:

Պատերազմից հետո կապիտալիզմն ստեղծել էր  
այսպէս կոչված Պ.զգերի Լիգան, վորը պետք է ազ-  
գերի լեզրայրութիւն հաստատեր: Այլ Ազգերի Լիգան  
մի շատ հարմար ցուցանակ է, վորի լեռնում կապի-  
տալիստական լերկրները մաքրում են իրենց հաշիվ-  
ները: Իհարկե, վոչ մի քաջ նա չի արել չիզբարւո-  
թիւն հաստատելու: Նա միայն ծածկել է կապիտա-  
լիստների ռազմական պատրաստութիւններն ու նրանց  
վարած պատերազմները: Նրա քթի տակ Ֆրանսիան

ու Սպանիան չերկարատե պատերազմից հետո խեղ-  
դեցին Մարոկկոյին, Ֆրանսիան՝ Սիրիային, Ամերիկան՝  
Նիկարագուային, ոտաւ պետութիւններ զինված ին-  
տերվինցիան Չինաստանում վոչ մի հանդիմանութիւն  
նույնիսկ չդատւ Ազգերի Լիգայում, այն պարզ պատ-  
ճառով, վոր այդ Լիգան իմպերիալիստական պետու-  
թիւններ խարհրայական խրովիւակն ե:

Լիգային կից գոյութիւն ունեցող այսպես կոչ-  
ված զինաթափման հանձնաժողովը աչքակապությամբ  
և պարասում: Այդ պարզ կերպով հայտնաբերից մեր  
խորհրդային պատգամավորութիւնը, վորն առաջար-  
կեց զինաթափման մի կոնկրետ, դործնական ծրագիր:  
Հանձնաժողովում իմպերիալիստական պետութիւն-  
ների ներկայացուցիչները տապալեցին այդ ծրագիրը:  
Բայց խորհրդային առաջարկներն ոգնեցին մերկացնե-  
լու Լիգայի անդամների իսկական մտադրութիւնները  
և բաց արին յեվրոպական բանվորներից շատերի  
աչքերը:

Մի ուրիշ աչքակապութիւն եր և այսպես կոչ-  
ված Կիլլոգի պայմանագիրը, վոր առաջարկել եր Ամե-  
րիկան, և վորն ստորագրվել է մի շարք պետութիւն-  
ների կողմից: Այդ պայմանագիրը խոստանում է հա-  
վիտենական խաղաղութիւն և այլ նման բաներ: Բայց  
կապիտալիստական պետութիւնները, ստորագրելով  
այդ պայմանագիրը, աչքախի պայմաններ են դրել,  
վոր միշտ կարող են իրենց պատերազմական գործո-  
ղութիւններն արդարացնել: Խորհրդային Միութիւնն  
և ստորագրից այդ պայմանագիրը. յեթե մենք այդ  
չանելինք, կապիտալիստներն իրենց ռազմական պատ-  
րաստութիւններ կարողարացնեն՝ ասելով, թե՛ «տե-



սեք, ԽՍՀՄ խաղաղության դեմ ե»։ Մենք ստորագրեցինք, միևնույն ժամանակ հայտարարելով, վոր չենք հավատում կապիտալիստների աված և վոչ մի խոստումին։

Բուրժուազիայի այդ «խաղաղասիրական» քայլերի նպատակն և միամտացնել բանվորությունը, համոզել իրր թե պատերազմի վտանգը հնարել են կոմմունիստները, թույլ չտալ այդպիսով, վոր բանվորները կազմակերպված պայքարի պատրաստվեն յեկող պատերազմների դեմ։

Յուրաքանչյուր յերկրի կապիտալիստները համոզում են բանվորներին, վոր իրենց բանակը միայն ինքնապաշտպանության համար և, վոր վոչ մի հարձակողական քաղաքակոնություն իրենք չեն տանի։

Պատերազմի պատրաստության այս մեծ ու պատասխանատու գործում անգնահատելի ծառայություն և մատուցում բուրժուազիային սոցիալ-դեմոկրատիան։

Սոցիալ-դեմոկրատիան ել պասերազմ և պատրաստում

Հայտնի յե սոցիալ-դեմոկրատիայի դիրքը համաշխարհային պատերազմի ժամանակ։ Պատերազմի նախորյակին

Նրանք ամենակատաղի կերպով հարձակվում եյին միլիտարիզմի վրա իրենց մամուլի եջերից, բայց միքանի որ հետո միանալով իրենց բուրժուազիային, ակտիվ կերպով մասնակցեցին համաշխարհային սպանդանոցը կազմակերպելու գործին. 1914 թվի ոգոստոսի 4-ին գերմանական սոցիալ-դեմոկրատ պատգամավորները քվեարկեցին պարլամենտում (ուսյխստագում) պատերազմական վարկերի ոգոին։ Նրանց որինակին

հետևեց մյուս կուլոդ պետությյուններէ սոցիալիստ-  
ների մեծամասնությունը: Ֆրանսիական սոցիալիստ-  
ներն ասում եյին, թե Ֆրանսիան պաշտպանվում է,  
խսկ Գերմանիան հարձակվում, Գերմանական սոցիալ-  
դեմոկրատները հակառակն եյին պնդում: Հետևանքն  
այն եր, վոր նրանցից ամեն մեկը հավատարմորեն  
պաշտպանում եր իր սեփական բուրժուազիայի շահերը:

Նույն դիրքն է բռնելու սոցիալ-դեմոկրատիան և  
գալիք պատերազմների ժամանակ, բայց այդ դեռ բո-  
լորը չի: Վերջին տարիների ընթացքում, դասակար-  
գային պայքարի սրման հետևանքով, սոցիալ-դեմոկրա-  
տիան ավելի ու ավելի յե մոտեցել կապիտալիստնե-  
րին, ձուլվել կապիտալիստական սիստեմի մեջ, դառել  
նրա ամենահավատարիմ գամփոը: Սոցիալ-դեմոկրա-  
տիան աշխատում է ապացուցել բուրժուազիային, վոր  
նա կարող է պաշտպանել կապիտալիստների շահերը  
նույնքան հաջող կերպով և նույն մեթոդներով, ինչ-  
պես Ֆաշիզմն է անում: Ունենալով իրենց ազդեցու-  
թյան տակ դեռևս հետամնաց բանվորների խոշոր շեր-  
տեր, նրանք «դասակարգային խաղաղությյուն» և հա-  
մադորժակցություն են քարոզում, համոզում բանվոր-  
ներին ոգնել ժխեղճ ու կրակ» կապիտալիստներին.  
միաժամանակ նրանք լերկաթե ձեռքով սեղմում են  
այն բանվորներին, վորոնք վորևէ հեղափոխական քայ-  
լի են դիմում: Կապիտալիստական տրեստների ու պե-  
տությյան հետ դաշնակցած սոցիալ-դեմոկրատիան վոչ  
միայն կոգնի նրանց պատերազմի ժամանակ. նա  
հենց այսոր իՅԲԳ ակօիվ պատրաստուքուն և օես-  
Յուճ այդ պատերազմի համար:



Ճիշտ է, սոցիալ-դեմոկրատներն այսօր ել չեն ասում, թե իրենք պատերազմի կողմնակից են: Նրանք, մասնավորապես նրանց այսպես կոչված ձախ թևը, ամեն օր իրենց մամուլի հղերից խաղաղութչուն են քարոզում:

Հենց այդ պատճառով ել նրանք վաճագաձոր են, վորովհետև լկախ կերպով խարում են մասսաներին, միաժամանակ ուղղմական պատրաստութչուն տանելով: «Սոցիալիստական» կառավարութչունների դիմակով սպառնալով, նրանք բուրժուազիայի հետ միասին հուտահում են ուղղմական ուժերը: Գերմանիայում Այտալիցիոն կառավարութչան դուրս գանձող սոցիալ-դեմոկրատներն իրենց քվեն տվին նոր ուղղմանավեր կառուցելու համար: Անդլիայում Մակդոնալդի կառավարութչունը շարունակում է հին կառավարութչան ուղղմական քաղաքականութչունը: Բնորոշ է, վոր արդեն չերկու ամիս է, ինչ Մակդոնալդի կուսակցութչունը իշխանութչան դուրս է անցել, և դեռ մինչև այժմ նա չի կատարել իր խոստումը՝ ԽՍՀՄ-ի հետ դիվանագիտական հարաբերութչունները վերականգնելու մասին: Նա կանի այն, ինչ կվորոշի բուրժուազիան:

Բոլոր չերկրներում սոցիալ-դեմոկրատները և դեղին պրոֆմիութչունների ղեկավարները մի կողմից ծածկում են մասսաներից պատերազմի վտանգը, մյուս կողմից մասնակցում նրա նախապատրաստութչանը: Գերմանիայում՝ ուղղմանավեր շինում, Ֆրանսիայում ուղղմական մոբիլիզացիայի որևէքների մշակմանը մասնակցում (1925 թվին Մարոկկոյի կոնֆլիկտի ժամանակ Ֆրանսիական սոցիալիստներն իրենց բուրժուազիային պաշտպան կանգնեցին՝ հայտարարելով, թե ուիֆֆերի

ցեղն և հարձակվել Ֆրանսիայի վրա...), ամենուրեք նրանք հրահրում են ատելությունը դեպի ԽՍՀՄ՝ հպտարարելով, վոր աշխարհին սպառնացող վտանգը... «կարմիր իմպերիալիզմն և»: Այսպիսով նրանք ծածկում են իրենց բուրժուազիայի իմպերիալիստական ձեռնարկումները և հող նախապատրաստում Սորհրդային Միության դեմ պատերազմ սկսելու համար:

Նույնքան ուսուցիչն, հա-  
Պրոլետարիատի ցա-  
կաօք ասուրբ յերու-  
զուրյանք՝ դեմ

կահնդափոխական ընույթ և  
կրում և սոցիալ-դեմոկրատի-  
այի ներքին քաղաքականու-  
թյունը: Չի յեղել վերջին տարիների ընթացքում վոչ  
մի փոքր ի շատե աչքի ընկնող գործադուլ, վորը սո-  
ցիալ-դեմոկրատները չվիժեցնեն: Նրանք խեղդում են  
վոչ միայն բանվորների հեղափոխական յելույթները,  
այլև ամեն մի դժգոհություն, ամեն մի անուեսական  
պահանջ: Սկզբում նրանք աշխատում են բանվորների  
վրա ադդել խաբեքայությամբ, ապա ուժով:

Խաբեքայական միջոցներից ամենատարածվածը  
այսպես կոչված արբիտրաժ դատարաններն են: Այդ  
դատարանները կազմված են դեղին պրոֆմիություն-  
ների, գործարանատերերի և պետության ներկայա-  
ցուցիչներից: Սոցիալ-դեմոկրատիան համոզում է բան-  
վորներին բոլոր թյուրիմացություններն ու կոնֆլիկա-  
ները հանձնել այդ դատարանին քննելու՝ ասելով, թե  
պետության ներկայացուցիչները «չեզոք» կերպով  
կլուծեն վիճելի խնդիրները: Նա ուզում է հավատաց-  
նել բանվորներին, իրր թե կառավարությունը բուր-  
ժուազիայի որգանը չե, այլ ինչ-վոր անկախ, վոչ  
դատակարգային ուժ է: Պարզ է, վոր դատավորներն

իրենց վճիռները հանում են կապիտալիստների սզախն. այդ վորոշումները պարտադիր են, և սոցիալ-դեմոկրատիան ստիպում է բանվորներին հնազանդվել:

Միևնույն ժամանակ սոցիալ-դեմոկրատիան գործակցում է ֆաշիզմի հետ կոմմունիստական կուսակցությունը ճնշելու համար. յեթե նա դժգոհ է բանվորների վարած անսեռական պայքարից, ապա նա ուղղակի սարսափում է քաղաքական պայքարի ուղղականից: Ահա թե ինչու, ֆաշիստների թելադրանքով, սոցիալ-դեմոկրատները ցրեցին կարմիր-ճակատայինների (ֆրոնտովիկների) միությունը Գերմանիայում, արդելիցին մայիս 1-ի առնակատարությունը և, յերբ բանվորությունը, չնայած այդ արդելքին, դուրս չեկավ փողոց միջադպիսին բանվորական որը տոնելու, նրանք ներկեցին բանվորական արյունով Բերլինի փողոցները:

Այսպիսով սոցիալ-դեմոկրատիան թե արտաքին, թե ներքին քաղաքականության մեջ դառնում է բուրժուազիայի ակտիվ հարվածային շոկատը, հակահեղափոխության հենարանն ու ֆաշիզմի մի թևը: Նա վոչ միայն ընդունակ չէ կռվելու պատերազմի վտանգի դեմ, այլև կատաղի կողմնակից է նոր պատերազմներին:

Առաջներում բանվորները տնտեսական պայքարի, գործադուլների ժամանակ տեսնում էին իրենց դիմաց միայն մի կապիտալիստի կամ մի խումբ կապիտալիստների: Յեվ բանվորներից շատերը կարծում էին, թե հենց այդ մի խումբ կապիտալիստներն են վատ: Այսօր դրությունը բոլորովին ուրիշ է: Կապիտալն այսօր կենտրոնացած է հսկայական տրեստների

ձեռքին, և նույնիսկ ամենափոքր կոնֆլիկտի ու վոր-  
ժադուլի ժամանակ բանվորների դեմ կանգնած և ամ-  
բողջ կապիտալիստական դասակարգը և նրա պետու-  
թյունը. բանվորը տեսնում է, վոր կապիտալիստին  
ծառայում է և ժանդարդը, և դատավորը, և կառավա-  
րութիւնն պաշտոնյաները, և պետական ամբողջ սիս-  
տեմը: Նրա պայքարը կապիտալիստի դեմ վերածվում  
է պայքարի այդ սխտեմի դեմ: Տնտեսական պայքարը  
դառնում է քաղաքական պայքար:

Բայց այդ բոլորը չի բանվորը տեսնում է, վոր  
կապիտալիստին ու պետութիւնն ոգնում է սոցիալ-  
դեմոկրատիան: Ստացվում է այդ յերեք ուժերի մի-  
ացյալ ֆրոնտ, մի «սուրբ յերրորդութիւն»՝ ուղղված  
բանվոր դասակարգի դեմ: Յե՛վ բանվորութիւնն ամե-  
նափոքր տնտեսական պայքարը փոխվում է վոր միայն  
քաղաքական պայքարի, այլև Եղափոխական պայ-  
քարի:

Այս հանգամանքը չափադանց սրում է դասակար-  
գային պայքարը և նպաստում բանվորների քաղաքա-  
կան հասունացման: Այդ մասին վկայում են այն հըս-  
կայական գործադուլային շարժումները, վոր անցան  
վերջին մի տարվա ընթացքում Գերմանիայում, Ֆրան-  
սիայում, Լեհաստանում և միշտը ուրիշ յերկրներում:  
Կապիտալիստական ռոցիոնալիզացիայի ճանկերում  
սեղմված, սոցիալ-դեմոկրատիայի կողմից մատնված  
պրոլետարիատը գիմադրում է և անցնում հակահար-  
ձակման: Հեղափոխական շարժման ալիքները բարձ-  
րանում են նորից: Բարձրանում է նաև կոմունիստա-  
կան կուսակցութիւնների հեղինակութիւնն ու ղեկա-  
վար դերը:

Բերլինում մայիսի մեկին Նոյկյուն և Վեդդինգ քաղաքամասերում բանվորները կռվում են բարրիկադերների վրո, հեռավոր Բոմբեյում (Հնդկաստանում) բանվորները գործադուլ գործադուլի յեռուից են տանում, ունենում են արյունատ ընդհարումներ վոտիկանության հետ, Ֆրանսիայում պահեստի գինվորները ցույցիւր են կաղմակերպում պատերազմի դեմ, այս ամենը գալիս է ասելու, վոր հեղափոխական շարժումը ձավալվում է որեցոր:

Ինչպես աշերհ ու ռը-  
րոցկիսսեհրհ՝ ուզնում  
են կապիսալիզմից

Այսորվա պայմաններում,  
կապիտալիզմի հետպատերազ-  
մյա դարգացման լերրորդ շըր-  
ջանում կոմմունիստական կու-

սակցությունների պարտքն է համախմբել մասսաներն իրենց շուրջը՝ անխնա պայքար մղելով սոցիալ-դեմոկրատիայի, ֆաշիզմի, բուրժուական պետութւան դեմ, կենարոնացնելով միջազգային պրոլետարիատի ուշադրությունը պատերազմի վտանգի վրա: Այս է կոմիստերնի գիծը: Այս գիծը կատաղեցնում է բուրժուազիային և սոցիալ-դեմոկրատներին: Բաց սրա դեմ են դուրս գալիս և մի շարք կոմմունիստներ ու նախկին կոմմունիստներ: Որինակ՝ աջ կոմմունիստները (թե կուսակցության ներսում, թե նրանից դուրս դանվող) ասում են. կոմիստերնը իզուր է պահանջում սուր պայքար մղել սոցիալ-դեմոկրատիայի դեմ. վորոշ դեպքերում կարելի յե նույնիսկ գործակցել վերջինիս հետ, քանի վոր նա դեռ բանվորական կուսակցություն է:

Սա նշանակում է կապել բանվորների աչքերը և թույլ տալ, վորպեսզի սոցիալ-դեմոկրատիան պահ-

պանի իր ազգեցութեանը բանվորութեան հետաճեաց  
խաղերի վրա:

Այդ աշերն արտահայտում են բանվորութեան  
հեղափոխական յելույթները դեմ. նրանք ստանում են,  
որինակ, վոր մալիս 1-ի դեմոնստրացիան Բերլինում  
ավելորդ եր և ֆրասակար: «Չպետք է ջլատել ու  
վատնել ուժերը, քանի դեռ չի հասել դիխավոր ճակա-  
տամարտը», ասում են նրանք: Այսինքն չպետք է  
հեղափոխական յելույթներ ունենալ, քանի դեռ իշխա-  
նութեանը վերցնելու հարցը չի դրված: Կարծես թե  
շատ «խոհեմ» ու «խելացի» տեսակետ է սա, բայց  
իրականում սոցիալ-դեմոկրատիզմի հոտ է փչում այդ  
տեսակետից: Մանր, մասնակի հեղափոխական յելույթ-  
ները հարկավոր են մասսաները դաստիարակելու հա-  
մար, նրանց վերջին կովին նախապատրաստելու հա-  
մար: Առանց այդպիսի նախապատրաստութեան գին-  
ված հեղաշրջումը հաշտութուն չի ունենա:

Աջերը հայտարարում են, թե Կոմինտերնը ճշն-  
շում է առանձին կոմմունիստական կուսակցութեան-  
ների ինքնուրույնութունը: Սա, իհարկե, սուտ է, Կո-  
մինտերնը այդպիսի կենտրոնացում չի մտցրել, բայց  
նա պահանջում է, վոր իր հիմնական քաղաքական  
գիծն անշեղ կիրառվի ամեն տեղ, պահանջում է մի-  
ջազգային համերաշխութուն իր ամեն մի կազմակեր-  
պութունից: Վերջապես, աջերը պնդում են, թե  
Կոմինտերնը չափազանցեցում է պատերազմի վտանգը,  
այդ վտանգը սեռ չէ և մոտ չէ, ասում են նրանք:  
Ուրիշ խոսքով՝ աջերը միամտացնում են բանվորներին  
և թուլացնում նրանց զգաստութունն ու ուղմական  
պատրաստութունը և այդպիսով ոգնում բուրժուազի-

ային ու սոցիալ-դեմոկրատիային հիմարացնել բանվոր-ներին: Ճիշտ նույնն են անում և սոց-դեմոկրատները:

Մյուս կողմից, արոցկիսաները ևս իրենց հերթին ունում են բուրժուազիային պատրաստել պատերազմ ՅՄՀՄ-դեմ: Նրանք իրենց կատաղի հարձակումներով ՅՄՀ Միութչան դեմ աշխատում են վարկաբեկել վերջինս: Յեկրոպական բանվորութչան աչքում:

Եռամսուհի սահակաց  
պայքարը պատերազմի  
վճանգի դեմ

Այս ամենն ստեղծում և շատ դժվար ու բարդ պայման՝ ներ միջազգային պրոլետարիատի հեղափոխական պայքարի համար: Մեծ հատութչուն, ճկունութչուն և միաժամանակ բալլչեկյան հաստատկամութչուն ու հետևողականութչուն և պահանջվում կոմմունիստական կուսակցութչուններից: Նրանք պետք և հալածանքի պայմաններում, ունենալով իրենց դեմ հակահեղափոխական մի մեծ Ֆրոնտ, սկսած մոնարխիստներից մինչև արոցկիսաներն ու աջ դավաճանները, կազմակերպեն մասսաները, պատրաստեն նրանց պայքարի կապիտալիստական կարգերի, սոցիալ-դեմոկրատիայի, միլիտարիզմի դեմ:

Ամենից դժվար գործը պատերազմի վտանգի դեմ պայքար մղելն և: Կան աչնախի մարդիկ, վորոնք կարծում են, թե պատերազմի առաջն առնելը հեշտ բան և: Նրանք ասում են՝ հենց վոր պատերազմը հայտարարվեց, մենք ընդհանուր գործադուլ կկազմակերպենք, ամբողջ արդյունաբերութչունը և չերկրի ամբողջ կյանքը կանգ կառնի: Պատերազմին մենք անխնա բոլկոտ կհայտարարենք և այդպիսով կստիպենք, վոր պեսզի բուրժուազիան նահանջի:

Այս «ձախ» խոստումներն անմտութունն են. վոչ մի ընդհանուր գործադուլ պատերազմի սկզբին հնարավոր չի լինի, վորովհետև բուրժուազիան մոբիլիզացիայի կենթորկի իր բոլոր զինված ուժերը, ֆաշիստներին, պատերազմի նախորյակին կքանդի բոլոր հեղափոխական կազմակերպութունները, հազարավոր ահալի բանվորների բանա կնետի և ամեն մի ղիմագրության փորձ արյան մեջ կխեղդի: Բացի այդ, գործադրելով իր ազդեցության բոլոր միջոցները, նա կհամոզի բանվորներին մի խոշոր մասին, իբր թե ինքը միայն պաշտպանվում է, իսկ հարձակվողը հարևան լեռկրի բուրժուազիանն է: Պատերազմի սկզբին բանվորության զգալի շերտերը կզնան ուղղամահառ «հայրենիքը պաշտպանելու»:

Յեթե կոմմունիստական կուսակցութունը բավարարվի այդպիսի «ձախ» մտադրութուններով՝ ընդհանուր գործադուլ, բուլկոտ կազմակերպել և այլն, առանց ձեռնարկելու ավելի խորացրած հակամիլիտարիստական աշխատանքի, նա ազճած կլինի բուրժուազիային ու սոցիալ-դեմոկրատիային:

Պատերազմի դեմ խսկապես կռվելու համար պետք է տարվի աարինների լարված նախապատրաստական աշխատանք: Պետք է կազմակերպվեն կոմմունիստական բժիշկներ բանակներում և նավատորմիղի մեջ: Պետք է ստեղծվի ուժեղ և ամուր քնդեաօտկյա կազմակերպություն, վոր կարողանա աշխատել պատերազմի ժամանակ, պետք է մշտական հակամիլիտարիստական աշխատանք տարվի բանվորության և առանձնապես յերիտասարդության շարքերում:



Այս ամբողջ աշխատանքը, վորը մեծ մասամբ պիտի տարվի զարգացի, ունենալու յե ճիշտ ու հստակ բայլընկիւան դրվածք: Բայլընկիւները չեն կարող բավարարվել՝ ասելով, թե իրենք պատերազմի դեմ են, նրանք պետք է աշխատեն իմպերիալիստական պատերազմները վերածել քաղաքացիական պատերազմների: Նրանք պետք է բոլոր կապիտալիստական յերկրներում պարտադրական դիրք բռնեն, այսինքն աշխատեն, վորպէսզի իրենց սեփական ըուրժուազիան պարտաթլուն կրի, այնպես, ինչպէս բայլընկիւներն ահուճ ելին վերջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Կոմունիստները չեն կարող «քրիստոնեաբար» հրաժարվել զինք կրելուց կամ քարոզել դասալքութուն յուրժուական բանականերից, այլ զեւթում նրանց կզրկեն այլ բանակաները հեղափոխական ելեմենտներից և կզժվարացնեն հեղափոխական պայքարը: Նրանք պետք է մտնեն այլ բանակաները և պատրաստեն զինվորական մասսաներն ապստամբութեան համար:

Յերբ բանվորների մեծամասնութունը կզգա իր կաշվի վրա պատերազմի սարսափները և դժգոհութեամբ կլիցվի, լավ կազմակերպված և մարտական կոմունիստական կուսակցութունը կկարողանա այդ դժգոհ մասսաների զլուխն անցնելով վերածել պատերազմը քաղաքացիական կովի, հանուն պրոլետարիատի դիկտատուրայի ու խորհուրդների իշխանութեան:

Ահա այս հիմնական ցուցմունքներն է տվել պատերազմի դեմ կովելու համար Կոմինտերնի 6-րդ կոնգրեսսը, վոր տեղի ունեցավ 1928 թվի ումառը: Այդ ցուցմունքների

Ռզոստոսի 1-ը՝ պրո-  
լետարիատի զարգաց-  
վաթի որ:

Ահա այս հիմնական ցուցմունքներն է տվել պատերազմի դեմ կովելու համար Կոմինտերնի 6-րդ կոնգրեսսը, վոր տեղի ունեցավ 1928 թվի ումառը: Այդ ցուցմունքների

կիրառման համար ե, վոր ախոր, ոգոստոսի 2-ին կոմ-  
մունիստներն ամեն տեղ կազմակերպում են հսկա  
ցույցեր միլիտարիզմի և ֆաշիզմի դեմ: Ոգոստոսի 1-ը  
զորահամալսքի որ ե կոմմունիստական ուժերի: Նա  
ցույց ե առու միլիտանտիստ բանվորների պարաստա-  
կամութունը՝ կովել պատերազմի վտանգի դեմ: Նա  
նաև բացելու յե միլիտանների աչքերն այդ մտացող  
վտանգի վրա, լինելու յե ահազանգի ու նախազգու-  
շացման որ միջազգային պրոլետարիատի համար:

Միաժամանակ ոգոստոսի 1-ը լինելու յե հեղա-  
փոխական պրոլետարիատի միջազգային համերաշխու-  
թյան որ, յերբ կոմմունիստները գործնականում  
ցույց կտան, չնայած տիրող ծանր պայմաններին,  
իրենց ինտերնացիոնալիզմը, ցույց կտան, վոր իրենք  
մեկ միջազգային բանակի կարգապահ ու անձնվեր  
զինվորներն են: Մինչև այժմ կոմմունիստական կու-  
սակցութուններից շատերը քիչ են հետաքրքրվել  
մյուս յերկրներին վերաբերող և միջազգային խնդիր-  
ներով և յերբեմն շատ թույլ կերպով են արձագանգել  
ուրիշ տեղերում կատարվող դեպքերին: Այսպես, որի-  
նակ, անդլիական ընդհանուր գործադուլի և հանքա-  
գործների գործադուլի ժամանակ 1926 թվին, Չինա-  
կան հեղափոխութանն ունելու գործում և միջազգա-  
յին հեղափոխական շարժման մի շարք ուրիշ խոշոր  
յերևութների խնդրում շատ կոմմունիստական կուսա-  
կցութուններ թավակատնաչափ ակտիվութուն չեն  
ցույց տվել: Այս էպրովինցիալիզմը, վորը ժառանգու-  
թյուն ե մնացել հին ժամանակներից, յերբ կոմմու-  
նիստներն ու սոցիալ-դեմոկրատները մի կուսակցու-  
թյան մեջ ելին, ախոր վերանում ե, և ոգոստոսի 1-ը

մի անգամ ևս կապացուցի, վոր կոմմունիստական կուսակցութեաննորը պողպատի նման ձուլված միասնական կարմիր ֆրոնտով են դուրս դալիս պայքարի աշխարհիս բոլոր ծայրերում:

Բուրժուազիան ու նրան ծառայող սոցիալ-դեմոկրատիան ևս պատրաստվում են ամենուրեք միջազգային կարմիր որվա համար: Ոգոստոսի 1-ին նրանք զնդացիրներով են խոսելու բանվորների հետ: Բանվորական ցույցեր խանդարելու և ճնշելու համար նրանք բացի կեղծիքից ու հայհոյանքից կոմմունիստների և Պորհրդային Միութեան հասցելին, կգործադրեն զբահապատ ավտոմոբիլներ, թռևավոր գաղեր, ֆաշիստական խմբերի զնդակներն ու ժանդարմների մարակները: Տասնչափ ու հարյուրավոր բանվորների արյունով կնեղվեն Բերլինի, Պարիզի, Վարշավայի ու այլ քաղաքների փողոցները: Բաց կոմմունիստական շարժումը դրանով չի ընկճվի, նա ավելի կկոփվի այդ փորձնական պայքարում և իր շարքերը կհամախմբի բանվորական նոր զանգվածներ, նոր ուժեր կհավաքի ապագայի անեղ պայքարների համար:

Ոգոստոսի 1-ին հեղափոխական բանվորութունը դուրս է դալիս փողոց վոչ միայն պատերազմի ու ֆաշիզմի դեմ պայքարելու: Այդ պայքարը նա սերտ կերպով կապում է իր հայրենիքի պաշտպանության — Խորհրդային Միության պաշտպանության հետ: Նա համարձակ կերպով հայտարարում է, վոր բանվորի միակ հայրենիքը ԽՍՀՄ-ն է, վորը նա պաշտպանելու չե ամեն դեպքում ու միջոցով: Հեղափոխական պրոլետարիատը կատարում է բոլոր յերկրներում իր միջազգային պարտքը հանդեպ պրոլետարիատի գլխատուրայի յեր-

կրի, հանդեպ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան:

ԵԱՀՕ՝Վ ԵՅՖ ռզճեղու Մեր, Խորհրդային Միութեան, մեճՖ միջազգային պրոլետարիատը ևս տոնելու յետպուրջաբարձի ռզոստոսի 1-ը, միջազգային կարմիր որը, բայց բոլորովին այլ ձեերով:

Մեր յերկիրն անզուսպ տնտեսական վերելքի շրջան ե մտնում: Այն հնգամյա պլանը, վորը կազմվել ե մեկանում, և վորն արդեն սկսել ենք մենք իրականացնել գործնականում, ցույց ե տալիս, վոր միքանի տարվա ընթացքում մենք կկարողանանք հասնել կապիտալիստական յերկրներից շատերին մեր տեխնիկայով ու տնտեսութեան մակարդակով: Յերկրորդ հնգամյակը մեզ թույլ կտա անցնել ամենաառաջվոր կապիտալիստական յերկրներից, և մի 10—12 տարի հետո մենք կդառնանք աշխարհիս տնտեսապես ամենաուժեղ յերկիրը: Հենց միայն առաջին 5 տարում մեր արդյունաբերութեանը 3 անգամ ավելացնում ե իր սրտադրութեանը, մենք ստեղծում ենք մետաղի, մեքենաների ու քիմիական նյութերի հսկա արդյունաբերութեան, ելեկտրական եներգիւղով լեցնում մեր ամբողջ նիստ ու կացը, բանվորների ռեալ աշխատավարձն ավելացնում 70 տոկոսով:

Այսոր մենք դեռ խոշոր դժվարութեաններ ենք ապրում, շնորհիվ մեր հետաճացութեան: Մենք հաց քիչ ունենք, վորովհետև գլուղացին հին ձևով ե հողը մշակում, հողն աղքատ ե, բաժան-բաժան յեղած մանր տնտեսութեանների մեջ: Բայց արդեն մեկ-մեկ ու կիս տարի հետո մեր ստեղծած կոլեկտիվ ու խորհրդային տնտեսութեանները հարյուր միլիոնավոր փթերով հաց

կտան, ստանալով մեր արդյունաբերութեանից մեքենաներ և քիմիական պարարտացման միջոցներ, Այսօր մենք դեռ մետադ, քարածուխ ու մեքենաներ քիչ ունենք, վաղն արդեն նոր հանքերն ու գործարաններն իրենց արդյունքով կհեղեղեն մեր չերկիրը. չորս տարի հետո հարյուր հազարավոր տրակտորներ ու ավտոմոբիլներ կտան մեր նոր գործարանները:

Մենք արդեն շատ արագ թափով ենք զարգացնում մեր արդյունաբերութեանը, շնորհիվ մեր տնտեսութեան կենտրոնացման ու սոցիալիստական սխտեմի: Բայց այդ թափն էլ անբավարար է: Միջազգային բուրժուազիան պատրաստվում է աննդատ կերպով պատերազմի Խորհրդային Միութեան դեմ: Մեր չերկրում դասակարգային թշնամին աշխատում է խանդարել սոցիալիստական շինարարութեանը: Պատերազմի վրտանդի դեմ կռվելու ամենալավ և միակ միջոցը չերկրի ինդուստրիացումն է ու նրա գլուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը: Այս ձևով մենք կուժեղացնենք մեր ռազմունակութեանը և պատերազմի դեպքում կկարողանանք ավելի մեծ հաջողութեամբ պաշտպանել մեր Միութեանը:

Սա պահանջում է վորքան կարելի չի արագացնել մեր զարգացման թափը, լարել մեր բոլոր ուժերը: Բանվոր դասակարգը ցույց է տվել, վոր ինքը հրաշքներ կարող է գործել ռազմական Ֆրոնտում, նա պետք է ցույց տա և ցույց է տալիս արդեն նոր հրաշքներ տնտեսական Ֆրոնտում, բարձրացնելով արտադրողականութեանը, ժամալեկով արդյունաբերութեանը:

Ինչ միջոցներով կարելի չէ և պետք է և

ար սգացնել արդյունաբերութեան զարգացման թափը:

1. Բարձրացնելով աշխատանքի կարգապահութիւնը և ապահովելով բանվորական որվա լրիվ ոգտադործումն արտադրութեան մեջ:

2. Մացնելով սոցիալիստական ուսցիոնալիզացիա, այսինքն, հում նշութի, վառելիքի, մեքենաների և բանվորական ուժի նպատակահարմար ոգտադործումն:

3. Տեխնիկական բարենորոգումներ ու կատարելագործումներ մտցնելով:

4. Բանվորներին արտադրութեան կազմակերպման գործին ակտիվ մասնակից դարձնելով (արտադրական խորհրդակցութեւնների միջոցով):

5. Անընդհատ աշխատանքի շարաթի անցնելով (սա նշանակում է՝ ամին մի, բանվոր հինգ որ կաշխատի, վեցերորդ որը կհանգստանա, իսկ գործարանը կաշխատի անընդհատ, հերթապահութեան շնորհիվ):

6. Սոցիալիստական մրցման միջոցով և այլն:

Ահա թե ինչ ձևով պիտի մեր բանվորը տոնի միջազգային կարմիր որը, ինչ ձևով պիտի պայքարի նա պատերազմի վտանգի դեմ և իր համերաշխութիւնը հայտնի միջազգային բանվորութեանը:

Ոգտստոսի 1-ը տոնել կնշանակի՝

այդ որվանից ել ավելի լարել մեր ուժերը արտադրութեւնը բարձրացնելու, գործալքումների, ծուլութեան, անտնտեսավարութեան դեմ պայքարելով,

այդ որվանից ել ավելի ուժեղ թափով տանել կոլլեկտիվ տնտեսութիւնների շինարարութեւնը գյուղում,

այդ որվանից ել ավելի ուղադրութեամբ հեռեկ

դուրսդուստ տեղի ունեցող դասակարգային պայքարին, սգնել չքավոր ու միջակ դուրացիներին կովելու կուլակի շահագործման դեմ, համախմբելով նրանց կոմունիստական կուսակցութեան շուրջը,

այդ որվանից ե՛լ ավելի կանոնավորել մեր բոլոր սպառառուների աշխատանքը, թե խորհրդային, թե կոտլերատիվ, թե արհեստակցական, թե տնտեսական — հարմարեցնել մեր սոցիալիստական շինարարութեան նոր պահանջներին,

այդ որվանից ե՛լ ավելի ծավալել սոցիալիստական մրցումը մեր աշխատանքի բոլոր սպառեզնեքում, ինքնաքննադատութեան միջոցով մերկացնելով մեր բոլոր բացերն ու մաքրելով մեր բոլոր ցավերը:

Ե՛նթուստրիացման

Լենինգրադի բանվոր Սլաբոդ-

ուրը

չիկովի առաջարկութեամբ Խոր-

հրդային Միութեան պրոլետարիատը վորոշել է հայտարարել ոգոստոսի Ծ-ը (Ռուսաստանում տոն որ է) ինդուստրիացման որ և աշխատել այդ որը, ավերող աշխատավարձը հատկացնելով ինդուստրիացման դործին: Մեզ մոտ, Խորհրդային Հայաստանում ևս բանվորները ցանկանում են ինդուստրիացման որ ունենալ և ընարում են ոգոստոսի 1Զ-ը, վորը հանգստյան որ է լեղել: Այդպիսով, ինդուստրիացման որն անցկացնելով, մեր պրոլետարիատն իր համերաշխութեունը ցույց կտա Խորհրդային Միութեան պրոլետարիատին և կպատասխանի արտասահմանյան բանվորներին կոչին, բանվորների, վորոնք դուրս են գալիս փողոց ոգոստոսի 1-ին՝ ճակատ առ ճակատ կապիտալիստներին ու նրանց վարձկան Փաշիստների ու սոցիալ-դեմոկրատների դեմ:

Ոգոստոսի 12-ին մեր նշանաբաններն են լինելու:


Վե՛հ մի գործալքում:

Բոլորը դեպի տնտեսական ճակատ:

Մեր լուրաքանչյուր ավել արտադրած մետր կտորը, յուրաքանչյուր տոնն հանքը, յուրաքանչյուր սարքված մեքենան, յուրաքանչյուր հեկտար հողը, վոր ավել է ցանում կոլխոզը, չքավորն ու միջակը, հարվածում է կապիտալիստին, ամբոցնում մեր Խորհրդային Միությունը:

Բուրժուազիայի պատերազմական պատրաստություններին միջազգային պրոլետարիատը պատասխանում է հսկա ցուլցերով. մենք պիտի պատասխանենք ավելի լարելով մեր աշխատանքի թափը:

Միջազգային կարմիր որը հեղափոխական կովի ու սոցիալիստական շիրարարության որն է:







ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045866

124  
A 866

Т. МАНДАЛЯН

Международный  
красный день

(1-е августа)



ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ